ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

# ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

N ՄՊ/343-2022 **ք.Արտաշատ**

„17„ Նոյեմբեր **2022թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 2-Ի N ՄՈ/135-2021 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի ա) ենթակետի պահանջներով, հիմք ընդունելով <<Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դիմիտրովի միջնակարգ դպրոց>>, <<Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վերին Դվինի միջնակարգ դպրոց>> և <<Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս գյուղի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունների միավորված կառավարման խորհրդի նախագահի գրությունը.

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի 2021 թվականի հունիսի 2-ի <<Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի <<Պետական ուսումնական հաստատություն>> պետական ոչ առևտրային կազմակերպությունների կառավարման խորհուրդների կազմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի 30.06.2010 թ. N68, 26.11.2010 թ. N 123, 26.01.2011 թ. N05, 28.10. 2011 թ. N74, 26.05.2014 թ. N55, 15▯03▯2016 թ▯ N19 և 26▯04▯2016 թ▯ N27 որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին>> N Մ/Ո135-2021 որոշման 2-րդ հավելվածի 6-րդ տողում <<Համբարձումյան Նունիկ>> բառերը փոխարինել <<Սևիյան Ասյա>> բառերով:

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

Восстановимая подпись

X

ՍԵԴՐԱԿ ԹԵՎՈՆՅԱՆ

Подписано: NAZARETYAN ARTAVAZD 2409881092 Ա" ՆԱԶԱՐԵԹՅԱՆ